ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2014թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Կոմիտասի պողոտայի հ.49/4 շենքի հ. 34 բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ստելլա, Դավիթ, Դիանա Բեգլարյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ստելլա Բեգլարյանը դիմել է Երևանի քաղաքապետարան Երևանի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս պողոտայի հ.49/4 շենքի հ.34 (նախկին 416 սենյակը)՝ 18,0քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իր ընտանիքին անհատույց մասնավորեցնելու (նվիրելու) խնդրանքով:

Նշված բնակարանը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 07.06.2013թ. հ.07062013-01-0001 վկայական):

Ադրբեջանից բռնագաղթվելուց հետո Ստելլա Բեգլարյանը հանգուցյալ մոր՝ Իննա Ակապովայի հետ միասին փաստացի բնակություն է հաստատել Երևան քաղաքի Կոմիտաս պողոտայի հ.49/4 հանրակացարանում, զբաղեցնելով հհ.406, 416 սենյակները և վարելով համատեղ տնտեսություն:

Երևանի քաղաքապետի 04.12.2012թ. հ.7717-Ա որոշմամբ Կոմիտաս պող. հ..406՝ սենյակը սահմանված կարգով անհատույց օտարվել է Ստելլա Բեգլարյանին, որդուն և դստերը (Դավիթ և Դիանա Բեգլարյաններին ծնված 2004, 2006թթ.) իսկ հ.406 սենյակի մասնավորեցման գործընթացը մնացել է անավարտ իր մոր՝ Իննա Ակապովայի մահվան պատճառով (հիմք՝ մահվան վկայական ԱԲN129737, տրված 18.06.2013թ.):

Երևանի քաղաքապետի 31.05.2013թ. հ.2694-Ա որոշմամբ վերը նշված բնակարանին տրամադրվել է Կոմիտասի պողոտա հ.49/4 շենքի հ.34 բնակարան հասցեն:

Վերը նշված հասցեի բնակարանը Երևան քաղաքի ավագանու որոշմամբ քաղաքացի Ստելլա Բեգլարյանի ընտանիքին անհատույց մասնավորեցնելու նվիրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման ծրագրի 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական համգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման ծրագրի 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ